ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՁ Վազգեն Հովսեփյան-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/145 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	շապիկ	շապիկ մուգ կանաչ	ԱՁ Վազգեն Հովսեփյան	Շապիկ մուգ կանաչ (խակի) - Գործվածքը տրիկոտաժ, 100+/-2% բամբակ բաղադրությամբ, մակերեսային խտությունն առնվազն 180 գրամ, գույնը՝ մուգ կանաչ (խակի): Գույնի երանգը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը՝ ուղիղ ձևածքով, կարճաթև, կլոր օձիքով՝ վզամասը մշակված տրիկոտաժե էլաստիկ մանժետով: Թևքերի երկարությունը ուսի միացման կարի կենտրոնական հատվածից 2-րդ հասակային խմբի համար 22-23սմ, յուրաքանչյուր հաջորդ խմբի համար ավելանում է 1սմ: Ուսամասերն ամբողջությամբ վրակարված են համազգեստի գործվածքով (մակերեսային խտությունը՝ 220□5 գրամ/մ2, բաղադրությունը՝ 65□2% պոլիէսթեր, 35□2% բամբակ, գործվածքի տեսակը՝ <<TWILL>>, ներկման մեթոդը՝ <<Ռեակտիվ>>, գույնը՝ մուգ կանաչ):

				Թևքերի միացման կարերի մեջից մշակված են 4.5-5սմ լայնությամբ կամրջակներ 7X5սմ չափսի կոչման տարբերանշանի անցկացման համար: Կամրջակների եռանկյունաձև ծայրերը կոճկվում են մետաղական կոճգամներով: Շապիկի մեջքի կենտրոնական հատվածում՝ օձիքի միացման կարից 13սմ հեռավորությամբ, բեժ թելով, 4X2.5X0.7սմ (բարձրություն X լայնություն X հաստություն) չափի տառատեսակով ասեղնագործված է «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Ձախ թևին՝ ուսագլխից 6սմ ներքև ասեղնագործված և կարված է ՀՀ եռագույն դրոշը՝ 7սմ լայնությամբ և 3.5սմ բարձրությամբ, ներքևում գրված «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ աջ թևքի կենտրոնում Փրկարար ծառայության տարբերանշանը: Շապիկի ներսի կողմից՝ ստորին հատվածում կարվում է պիտակ վրան նշված չափսը, արտադրողի անվանումը և խնամքի պայմանները: Չափսերը և կոչումների քանակները կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Բոլոր տարբերանշանները ամրացվում (կարվում) են տարբերանշանի վրա ասեղնագործված եզրակարերին համապատասխան գույներով /բեժ/: Կոչման տարբերանշանը արտադրվում է համազգեստի գործվածքից՝ հանովի օղագոտու տեսքով: Արտաքին չափսերը՝ 7X5սմ: Թույլատրելի շեղումը +/- 2%: Աստղերն ասեղնագործված բեժ գույնի թելով, հնգաթև, ուռուցիկ, 13 և 20մմ տրամագծերով: Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ-ոց աստղեր: Կապիտան, ավագ

				լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա 13մմ-ոց: Աստղերը պետք է տեղակայվեն հետևյալ կերպ՝ Գնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: Մայոր – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղի կենտրոնը 45մմ: Կապիտան – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 20մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը 20մմ հեռավորությն վրա՝ երրորդի կենտրոնից: Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 20մմ, երկրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից: Ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25մմ, երկրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից: Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից

				5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն ուղղահայց դիրքով: Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն հորիզոնական դիրքով: Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Փաթեթավորումը պիտակավորված պարկերով՝ վրան նշված տեսականու անվանումը, չափսը, արտադրողի անվանումը: Յուրաքանչյուրը անհատական փաթեթավորմամբ: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: Մատակարարված ապրանքի ողջ խմբաքանակը պետք է համապատասխանի նախօրոք ներկայացված նմուշին: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային խտության, ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ ՀՀ-ում

				հավատարմագրված կազմակերպությունից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП Вазген Овсепян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/145 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
5				